

# **ԵԼՔ դաշինքի ծրագիր**

## **Նախաբան**

**ԵԼՔ դաշինքը հիմնադրած քաղաքական ուժերը՝** «Լուսավոր Չայաստան» կուսակցությունը, «Չանրապետություն» կուսակցությունը, «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցությունը՝

- հավատարիմ լինելով Չայաստանի ինքնիշխանությունն ու անվտանգությունը պաշտպանելու իրենց հանձնառությանը,
- գիտակցելով Չայաստանի առջև ծառայած խնդիրների լուծման հրատապությունը,
- ելնելով Չայաստանի արդիականացման և ժողովրդավարական զարգացման առաջնահերթությունից,
- ականջալուր լինելով հակասությունները հարթելու և համագործակցության հիմքեր դնելու հանրային պահանջին,

**Չամաձայնության են եկել համատեղ քաղաքական գործունեություն ծավալելու մասին:**

Ըստ այդմ՝ «Լուսավոր Չայաստան» կուսակցությունը, «Չանրապետություն» կուսակցությունը, «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցությունը՝

**ա)** 2017 թվականի խորհրդարանական ընտրություններին մասնակցում են միասնաբար՝ **«ԵԼՔ դաշինք»** անունով,

**բ)** համատեղ գործունեության արդյունքում կսկսեն բանակցություններ միասնական կուսակցություն ստեղծելու վերաբերյալ,

**գ)** հետամուտ են Չայաստանում եվրոպական մոդելի՝ իրավական, ժողովրդավարական, սոցիալական պետության կառուցմանը՝ ազգային լավագույն առանձնահատկությունների և հետաքրքրությունների համադրությամբ,

**դ)** արձանագրում են, որ իրենց համատեղ գործունեությունը հիմնված է Չայաստանի շահերի գերակայության սկզբունքի վրա և նպատակ ունի ապահովել Չայաստանի երկարատև ու կայուն զարգացումը:

# **ԵԼՔ դաշինքը ժողովրդի վստահության քվեն ստանալուց և Հայաստանում պետական իշխանությունը ստանձնելուց հետո կիրականացնի հետևյալ քայլերը**

## **1. Չինված ուժեր**

**ա)** Սպաների համար նախատեսված բնակարանաշինությունը կհայտարարվի պետական առաջնահերթություն, և բնակարանաշինության տեմպերը առնվազն կեռապատկվեն. կքննարկվի վարձված բնակարանների համար սպաներին տրվող փոխհատուցման դրամագլուխը հիփոթեքային նպատակներով օգտագործելու հնարավորությունը:

**բ)** Առաջնագծում մարտական հերթապահություն կիրականացնեն միայն պայմանագրային զինծառայողներ՝ հատուկ աշխատավարձով: Այս ծրագրի ամբողջական իրագործումը տեղի կունենա հինգ տարվա ընթացքում:

**գ)** Պարտադիր զինվորական ծառայություն անցնող անձինք կստանան ոչ միայն զինվորական, այլև քաղաքացիական կրթություն, այնպես որ, բանակից զորացրվելիս նրանց կրթական ցենզը էականորեն գերազանցի բանակ զորակոչվելիս նրանց ունեցած կրթական ցենզին:

**դ)** Կճևավորվի քաղաքացիական-ռեզերվային բանակ. քաղաքացին նախապես տեղեկացված կլինի, թե հնարավոր մոբիլիզացիայի դեպքում ինքը ո՞ր պետք է ներկայանա, ո՞ր զորամիավորում պետք է զորակոչվի, ո՞վ է իր անմիջական հրամանատարը: Քաղաքացիներին պետք է նաև ամրակցվի զենք, որը կպահվի համապատասխան զինկոմիսարիատում կամ մոտակա զորամասում, կամ համայնքային հատուկ պահպանվող տարածքներում: Տարին երկու անգամ մոբիլիզացիայի եկթակա յուրաքանչյուր քաղաքացի կմասնակցի զորախաղերի:

**ե)** Միջոցների ծախսման արդյունավետության բարձրացման արդյունքում էականորեն կբարելավվի բանակի սննդի, հագուստի որակը, ինչի արդյունքում զինծառայողների ծնողները ստիպված չեն լինի այդ ամենով իրենց զավակներին ապահովելու համար ծախսեր իրականացնել:

**զ)** Կերաշխավորվի զինվորական պարտականությունների

կատարման ժամանակ առողջական խնդիրներ ձեռք բերած պայմանագրային գինժառայողների՝ գինված ուժերի համակարգ վերադարձի հնարավորությունը՝ տրամադրելով խելամիտ հարմարեցումներ, իսկ առողջական խնդիրներ ձեռք բերած նախկին ժամկետային ծառայողները կապահովվեն անհրաժեշտ ծառայություններով՝ առանձնահատուկ ուշադրություն դարձնելով շարունակական կրթությանը և զբաղվածությանը:

## **2. Արտաքին քաղաքականություն**

**ա)** Որպես Արցախի հարցի կարգավորման թիվ 1 անելիք՝ միջոցներ կձեռնարկվեն Հայաստան-Ադրբեջան ռազմական հավասարակշռության վերականգնման համար: Արցախի հարցում փոխգիշման մասին խոսք լինել չի կարող Ադրբեջանի ռազմաշունչ հռետորաբանության, ագրեսիվ քաղաքականության պայմաններում: Որևէ փոխգիշումային տարբերակի արդյունավետ քննարկման պայման է Արցախի ինքնորոշման իրավունքը ճանաչելու Ադրբեջանի հստակ պատրաստակամությունը:

**բ)** Կսկսվեն բանակցություններ՝ ԵՄ-ի հետ Ասոցացման և Խորը և համապարփակ ազատ առևտրի համաձայնագիր ստորագրելու շուրջ:

**գ)** ԵԼԶ դաշինքը արտաքին քաղաքական սխալ է համարում Հայաստանի անդամակցությունը ԵԱՏՄ-ին, որը լրջագույն ռիսկեր է պարունակում Հայաստանի ինքնիշխանության, անվտանգության, տնտեսական և քաղաքական բնականոն զարգացման, Արցախի հարցի արդարացի կարգավորման համար: ԵԼԶ դաշինքը համարում է, որ այդ ռիսկերի կառավարումը պետք է տեղի ունենա տարածաշրջանային և միջազգային իրավիճակի խորը վերլուծության և Հայաստանի ազգային շահերի հավասարակշռված սպասարկման միջոցով:

**դ)** Կսկսվեն բանակցություններ Հայաստանով դեպի Վրաստան իրանական գազի տարանցման շուրջ:

**ե)** Աշխատանքներ կիրականացվեն Հայաստանի արտաքին անվտանգության ապահովման այլընտրանքներ գտնելու ուղղությամբ:

գ) Կսկսվեն բանակցություններ ՅԱՊԿ շրջանակներում՝ անդամ երկրների՝ միմյանց անվտանգության ապահովման դաշնակցային պարտավորությունների հստակեցման շուրջ:

դ) Բոլոր միջոցները կձեռնարկվեն Վրաստանի, Իրանի, ԱՄՆ-ի, ԵՄ-ի և անդամ պետությունների, Ռուսաստանի, Չինաստանի, Հնդկաստանի, Մերձավոր Արևելքի և այլ երկրների հետ արժանապատիվ և փոխշահավետ հարաբերություններ հաստատելու համար:

ե) Միջոցներ կձեռնարկվեն հայ-թուրքական սահմանը առանց նախապայմանի բացելու համար:

***3. Հայաստանի բնակչության թիվը հնարավորինս կարճ ժամկետում կրկնապատկելու միջոցը Մեծ հայրենադարձությունն է. անհրաժեշտ է Հայաստանը դարձնել բոլոր հայերի երկիր, այնպես, որ աշխարհի ցանկացած կետում գտնվող հայ իրեն նույնականացնի հայկական պետականության հետ և այն դիտարկի եթե ոչ իր, առնվազն իր սերունդների պոտենցիալ բնակավայր:***

ա) Կստեղծվի Հայաստանի խորհրդարանի երկրորդ պալատը, որը կազմված կլինի Սփյուռքի հայկական գաղութների ներկայացուցիչներից, ովքեր կընտրվեն հենց գաղթօջախներում անցկացվող ընտրությունների միջոցով:

բ) Խորհրդարանի երկրորդ պալատի բացառիկ իրավասությունը կլինի «Հայաստան» համահայկական հիմնադրամի տնօրենի նշանակումը: Նաև՝ Ներգաղթի և Սփյուռքի ներդրումների հարցերով զբաղվող նախարարների նշանակման հարցը՝ վարչապետի ներկայացմամբ:

***4. Հայաստանը բարձր տեխնոլոգիական-արդյունաբերական (ռազմարդյունաբերական) երկիր դարձնելու ծրագրի իրագործում***

ա) 150 և ավելի աշխատող ունեցող տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի ընկերությունները կազատվեն շահութահարկից:

բ) Բանակի գնումները հայաստանյան արտադրողներից՝

կապելանան տարեկան պաշտպանական բյուջեի առնվազն 2 տոկոսի չափով:

գ) Հայաստանի զինված ուժերի զինանոցում առկա զինտեխնիկայի՝ վիճակագրորեն ամենահաճախ խափանվող դետալների արտադրությունը կկազմակերպվի Հայաստանում՝ սկսելով ամենապարզ դետալներից, հընթացս ձգտելով հասնել ավելի բարդ դետալների և սարքավորումների արտադրության:

դ) Արտադրական հոսքագծերի և օժանդակ սարքավորումների ներմուծումը երկու տարի ժամկետով կազատվեն ԱԱՀ-ից և մաքսատուրքից: Էլեկտրոմոբիլների ներկրումը և վաճառքը կազատվեն ԱԱՀ-ից և մաքսատուրքից:

ե) Այլընտրանքային էներգետիկայի ոլորտի ընկերությունները կազատվեն շահութահարկից և մաքսատուրքից:

զ) Գերակա ճյուղերում՝ որպես արտադրական տարածք օգտագործվող շինությունները 5 տարի ժամկետով կազատվեն գույքահարկից:

է) Որպես գործազրկության վերացման, բյուջեում ուղղակի հարկերի ավելացման միջոց կդիտարկվի ծանր արդյունաբերությունը: Առաջնայնություն կտրվի գուևավոր մետալուրգիային և քիմիական արդյունաբերությունը, հնարավորինս փակելով արտադրական ցիկլը և հումք արտահանող երկրից վերածվելով վերջնական ու մրցունակ ապրանք արտադրող երկրի: Արտոնյալ պայմաններ կստեղծվեն Սյունիքի մարզում մետաղածուլական գործարան ստեղծելու համար: Բոլոր շահագրգիռ կողմերի ներգրավելով՝ ամենակարճ ժամկետում Կապանի երկաթգծի կայարանը կկապվի ԻԻՀ Ջուլֆայի երկաթգծի կայարանին՝ ապահովելով հանքարդյունահանման և մետաղածուլման արդյունքում ստացվող ու մատակարարվող նյութերի տեղափոխումը երկաթգծով:

ը) Էլեկտրաէներգիայի և գազի սակագները 10-15 տոկոսով կնվազեցվեն՝ կորուստների նվազեցման, վերականգնվող էներգետիկայի զարգացման և էներգակիրների ներկրման այլընտրանքային աղբյուրներից օգտվելու միջոցով:

## **5. Պայքար կոռուպցիայի դեմ**

**ա)** ՀՀ բարձրաստիճան պաշտոնյաների էթիկայի հանձնաժողովը կլուծարվի, և կստեղծվի անկախ, ունիվերսալ հակակոռուպցիոն մարմին:

**բ)** Աժ էթիկայի հանձնաժողովի գործառույթների շրջանակը կընդլայնվի այնպես, որ պետական բարձրաստիճան պաշտոն ստացող յուրաքանչյուր անձի կենսագրությունը և գործունեությունը հրապարակային քննվի հանձնաժողովում, և հանձնաժողովը եզրակացություն տա տվյալ անձի՝ որպես բարձրաստիճան պաշտոնյա պիտանելիության մասին: Միաժամանակ անհրաժեշտ է նորացնել և կոնկրետացնել բարձրաստիճան պաշտոնատար անձի էթիկայի կանոնները:

**գ)** ՀՀ պետական պաշտոնի հավակնող և նման պաշտոն զբաղեցնող անձինք, ինչպես նաև նրանց հետ փոխկապակցված անձինք պետք է նոտարական կարգով լիազորեն համապատասխան լիազոր մարմին՝ աշխարհի ցանկացած բանկում և ֆինանսական կազմակերպությունում, ցանկացած երկրի տարածքում իրենց անունից փևտրել և ստանալ տեղեկություններ իրենց անունով հաշվեհամարների առկայության, ստեղծման օրից դրանց շարժի և մնացորդի, ինչպես նաև իրենց անունով շարժական, անշարժ գույքի և արժեթղթերի առկայության մասին: Նման լիազորագիր տալուց հրաժարվող անձինք չեն կարող լինել բարձրաստիճան պաշտոնյա:

**դ)** Պետական պաշտոն զբաղեցնելու ընթացքում բարձրաստիճան պաշտոնյայի և նրա հետ փոխկապակցված անձանց այն գույքի, դրամական միջոցների, բաժնեմասերի և բաժնետոմսերի ծագումնաբանությունը, որի գինը ձեռք բերելու պահին գերազանցում է այդ անձանց վերջին հինգ տարվա համատեղ աշխատավարձի 10-ապատիկը, պետք է Աժ էթիկայի հանձնաժողովում ենթարկվի հրապարակային և դրևբաց քննության:

**ե)** Կքննարկվի բարձրաստիճան պաշտոնյաների՝ պաշտոնավարման ընթացքում անհիմն հարստացման արդյունքում ձեռք բերված ունեցվածքի հարկման մեխանիզմի ներդրման հնարավորությունը:

գ) Հայաստանի արտաքին պարտքը աուդիտի կենթարկվի, կուսումնասիրվի վարկերի ծախսման արդյունավետությունը՝ հնարավոր չարաշահումները և դրանց մեղավորներին բացահայտելու համար:

## **6. գյուղատնտեսություն**

ա) Այն գյուղացիական տնտեսությունները, որոնք կանցնեն կաթիլային ոռոգման, հինգ տարի ժամկետով կազատվեն ոռոգման ջրի վարձից:

բ) Հակակարկտային ցանցերի արտադրությունը և վաճառքը կազատվեն ԱԱՀ-ից. ցանցապատված այգիները հինգ տարի կազատվեն հողի հարկից:

գ) Պետությունը կխրախուսի գյուղացիական ճյուղային (կարտոֆիլագործների, խաղողագործների, անասնապահների և այլն) ասոցիացիաների ստեղծումը, որոնք հանդես գալով որպես իրավաբանական անձ՝ կզբաղվեն գյուղացիական համքարությունների շահերի պաշտպանությամբ և մեծածախ մատակարարումների կազմակերպմամբ:

դ) Կստեղծվեն բացառապես օրգանական մթերքի արտադրության փորձարարական կենտրոններ, որոնց խնդիրը կլինի իրականացնել բուսաբուծություն՝ առանց քիմիական պարարտանյութերի:

ե) Կսկսվի փոքր ջրամբարների ստեղծման գործընթացը, ըստ որի, այն վայրերում, որոնց ռելիեֆային պայմանները թույլ են տալիս, փոքր ամբարտակներ կկառուցվեն՝ հալոցքային և անձրևային ջրերի ամբարման նպատակով:

զ) Պետական միջոցներով կստեղծվի էլեկտրոնային հարթակ, որտեղ գյուղմթերքի արտադրողներն ու սպառողները հնարավորություն կունենան «հանդիպել» և պայմանավորվել գյուղմթերքի առքուվաճառքի մասին:

է) Կստեղծվեն արագ փչացող գյուղմթերքի նախնական վերամշակման կենտրոններ, որոնք հնարավորություն կտան գյուղմթերքը պահեստավորել կիսաֆաբրիկատ վիճակում և իրացման ավելի ձեռնտու հնարավորություններ կստանան:

ը) Մինչև երկու տարվա գործարանային արտադրության

գյուղատնտեսական տեխնիկայի ներմուծումը և վաճառքը երկու տարի ժամկետով կազատվեն մաքսատուրքից և ԱԱՀ-ից:

## **7. Կրթություն և գիտություն**

**ա)** Հայաստանյան առաջատար բուհերի ճարտարագիտական, ծրագրավորման, կիբեռնետիկայի, բնական գիտությունների ֆակուլտետների և բնական գիտությունների թեքումով ավագ դպրոցների բազայի հիման վրա Սիլիկոնային հովտի օրինակով կձևավորվի գիտաարտադրական կոմբինատ, որը կգործի ամառային և ձմեռային ճամբարների տեսքով՝ պետական միջոցներից, հանգանակություններից, գրանտներից համաֆինանսավորվելու միջոցով: Ճամբարում փորձի փոխանակման և դասախոսելու կիրավիրվեն Սփյուռքի և Հայաստանի գիտատեխնիկական ոլորտի առաջատար մասնագետները, ինչպես նաև միջազգային հեղինակավոր մասնագետներ:

**բ)** Հանրակրթական դպրոցներում կներդրվի միջազգային բակալավրիատ ծրագիրը, որ միջազգային հանրակրթական լավագույն ծրագրերից է, դասավանդվում է Հայաստանի մի քանի դպրոցներում և ապացուցել է իր արդյունավետությունը: Ծրագիրը կհայկականացվի՝ հաշվի առնելով հայաստանյան մանկավարժության լավագույն փորձը:

**գ)** «Կուսակցությունների մասին» օրենքով՝ ուսումնական հաստատությունների ղեկավար կազմին կարգելվի որևէ կուսակցության անդամ լինել:

**դ)** Ուսումնասիրությունների արդյունքում կստեղծվի Հայաստանի բոլոր դպրոցների աշակերտների սոցիալական վիճակի քարտեզ: Քարտեզի հիման վրա՝ զգալի թվով անապահով աշակերտներ և առաջադիմության խնդիրներ ունեցող դպրոցներին կհատկացվեն լրացուցիչ միջոցներ՝ աշակերտներին լրացուցիչ, անվճար կրթական ծառայությունների մատուցման համար:

**ե)** Գյուղական համայնքներում դպրոցները կդառնան կրթամշակութային կենտրոններ, որտեղ գործում են մարզական, արվեստի, արհեստի, ինտելեկտուալ խաղերի խմբակներ: Դպրոցները նաև կհագեցվեն նորագույն

տեխնոլոգիաներով՝ երկարաժամկետ համագործակցություն ձևավորելով միջազգային տեխնոլոգիական կենտրոնների և լավագույն կրթական հաստատությունների հետ: Հատկապես գյուղական համայնքներում դպրոցները կդառնան երեխաների արտադպրոցական զբաղվածությունն ապահովող հիմնարկներ, և նրանց դռները չպետք է փակվեն դասապրոցեսի ավարտից հետո:

**գ)** Դպրոցների, միջին և բարձրագույն մասնագիտական հաստատությունների ուսումնական ծրագրերը արմատապես կվերանայվեն՝ դրանք համապատասխանեցնելով ժամանակի պահանջներին և աշխատաշուկային:

**ե)** Կիրախուսվի ուսուցիչների միասնական արհմիութենական շարժման ձևավորումը, որը կպաշտպանի ուսուցիչների շահերը:

**ը)** Առաջիկա հինգ տարվա ընթացքում հանրակրթությանը հատկացվող բյուջետային միջոցները կկրկնապատկվեն, ինչը կհանգեցնի նաև ուսուցիչների աշխատավարձի բարձրացման:

**թ)** Գիտությանը հատկացվող ֆինանսավորումը կհասցվի ՀՆԱ-ի 3 տոկոսի:

**ժ)** Կներդրվի պրոֆեսորադասախոսական կազմի դասաժամերի բաշխման մրցութային կարգ:

**ի)** Բոլոր պետական դպրոցներում կստեղծվեն տեխնոլոգիական լաբորատորիաներ. հիմնական և ավագ դպրոցում SS մասնագիտությունների նկատմամբ հետաքրքրությունն ավելացնելու նպատակով ուսումնական պարտադիր ծրագրում կներառվեն ինժեներական և ծրագրավորման դասընթացներ:

**լ)** Առավելագույնս կսահմանափակվի ցածրաճաշակ մշակույթի քարոզը, աջակցություն կցուցաբերվի հայոց լեզվի զարգացմանը. մշակութային քաղաքականության հիմնական նպատակը կդառնա հանրության կրթական ցենզի շարունակական բարձրացումը:

**խ)** Կստեղծվի հաշմանդամություն ունեցող անձանց աջակցության կենտրոն, որը բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության բոլոր փուլերում համագործակցությամբ կաջակցի հաշմանդամություն ունեցող ու-

սանողների որակյալ և մատչելի կրթության ապահովմանը՝ տրամադրելով մասնագիտական և տեխնիկական աջակցություն ուսանողներին և դասախոսական կազմին:

## **8. Փոքր և միջին ձեռնարկատիրություն**

**ա)** Տարեկան մինչև 500 միլիոն դրամ շրջանառություն ունեցող ընկերությունները կհարկվեն շրջանառության հարկով. ընդ որում կսահմանվի եռաստիճան համակարգ՝ մինչև 150 միլիոն դրամ շրջանառություն, մինչև 300 միլիոն դրամ շրջանառություն, մինչև 500 միլիոն դրամ շրջանառություն, եւ նշված սանդղակում առավել մեծ շրջանառություն ունեցող ընկերությունների համար կսահմանվի շրջանառության նվազ դրույքաչափ: Ընկերությունները հնարավորություն կունենան ընտրել Շրջանառության հարկով կամ ԱԱՀ-ով հարկման դաշտում աշխատելու միջեւ:

**բ)** Կներդրվի ՓՄՁ շահերի պաշտպանության՝ Բիզնես օմբուդսմենի ինստիտուտ՝ լայն լիազորություններով: Բիզնես օմբուդսմենը, սերտ համագործակցելով ՓՄՁ-ների շահերի պաշտպանությամբ զբաղվող հասարակական կառույցների հետ, անընդհատության ռեժիմով կընդունի ՓՄՁ-ներից ստացվող բողոքները պետական մարմինների հարուցած խոչընդոտների, մրցակցության խաթարման, կոռուպցիոն երևույթների վերաբերյալ և կպաշտպանի ՓՄՁ շահերը:

**գ)** Մինչև 20 քմ ՓՄՁ կրպակների համար կսահմանվի հաստատագրված վճար:

**դ)** Մաքսազերծման հսկիչ գները կվերացվեն և մաքսազերծման հիմքում կդրվեն հաշիվ ապրանքագրերը և տվյալ ապրանքի գների մասին համացանցում առկա տեղեկատվությունը:

## **9. Առողջապահություն**

**ա)** Պետպատվերի համար պետական բյուջեով նախատեսված գումարը կտրամադրվի ոչ թե հիվանդանոցներին, այլ (սերտիֆիկատի տեսքով) այն հիվանդներին, ովքեր պետպատվերից օգտվելու իրավունք ունեն, և նրանք հնարավորություն կունենան ընտրելու՝ ո՞ր բուժհաստատությունում բուժվել:

բ) Կիրականացվի ՀՀ բոլոր քաղաքացիների առողջության հետազոտություն, որի արդյունքում կստեղծվի քաղաքացիների առողջության վերաբերյալ տեղեկատվական բազա: Բազայի ձևավորման արդյունքում ռիսկային խմբերը պարբերաբար կենթարկվեն պարտադիր հետազոտության՝ հիվանդությունների զարգացումը կանխելու համար:

գ) Հաշորդ հինգ տարիների ընթացքում առողջապահությանը հատկացվող բյուջետային միջոցները կկրկնապատկվեն:

դ) Դեղերի արտադրությունը և վաճառքը կազատվեն ավելացված արժեքի հարկից:

ե) ԵՄ-ում, ԱՄՆ-ում, Կանադայում, Ճապոնայում և Ավստրալիայում գրանցված դեղերը Հայաստանում ինքնաբերաբար գրանցված կհամարվեն:

զ) Երրորդ, չորրորդ երեխայի ծննդյան պետական միանվագ դրամական օգնության չափերը կկրկնապատկվեն, հինգերորդ և վեցերորդ երեխայի ծննդյան դեպքում՝ կեռապատկվեն:

է) Ծննդատներում կներդրվի հոգեբանի ինստիտուտը, կանխելու համար նոր ծնված՝ առողջական խնդիրներ ունեցող երեխաների տեղափոխումը հատուկ հաստատություններ, և կստեղծվի ընտանիքների աջակցության մշտական ծառայություն, կզարգացվեն ինամատարության և որդեգրման ինստիտուտները:

*\* դ) և ե) կետերում նշված միջոցառումների արդյունքում առաջիկա մեկ տարվա ընթացքում դեղերի գները կնվազեն:*

## **10. Տրանսպորտ**

ա) Կներդրվի ազգային ավիափոխադրողի ինստիտուտը, որը կլինի պետական բաժնեմասով ավիաընկերություն և նրա բնականոն գործունեությունը կդիտարկվի որպես ազգային անվտանգության խնդիր:

բ) Կիրականացվեն ավիավառելիքի շուկայի ազատականացմանն ուղղված հակամենաշնորհային միջոցառումներ՝ ապահովելով ավիափոխադրման տոմսերի գների նվազեցում և դեպի Հայաստան տուրիստական ներհոսքի աճ:

գ) Արագաչափերի և տեսանկարահանող սարքերի

գործադրմամբ երթևեկության կանոնների խախտումների համար տուգանքներ նշանակելու պրակտիկան կոդաբեցվի. մինչև 2017 թվականի հունվարի 1-ը երթևեկության կանոնների խախտումների համար նշանակված և չվճարված տուգանքները կչեղարկվեն:

դ) Տարին առնվազն 10 միլիոն դոլար կներդրվի Երևանի մետրոպոլիտենի հետագա ճյուղավորման համար:

ե) Պետական համակարգի ծառայողական ավտոմեքենաների թիվը կկրճատվի 70 տոկոսով:

զ) Կգործարկվեն երթուղային բեռնատարներ, որոնք հայտարարված կանոնավոր չվացուցակով բեռնափոխադրումներ կիրականացնեն ապրանքաշրջանառության ամենաբանուկ միջազգային երթուղիներով:

է) Կկառուցվի Իրան-Հայաստան երկաթուղին՝ դիտարկելով նախագծի իրագործման փուլային տարբերակ:

## **11. Բնապահպանություն**

ա) «Սնունդ՝ աշխատանքի դիմաց» բանաձևով, կամավորների ներգրավմամբ, պետական և գրաստային միջոցների ներգրավմամբ կիրականացնի շրջակա միջավայրի տոտալ աղբահանում՝ մաքրելով գետերի հուները, անտառային և մերձճանապարհային տարածքները և խստացնելով վարչական հարկադրանքի միջոցները շրջակա միջավայրն աղտոտելու համար:

բ) Օրենսդրական բարեփոխումների արդյունքում բնապահպանական վճարները ամբողջությամբ կփոխանցվեն համայնքներին, իսկ բնությանը հասցված վնասի փոխհատուցման գումարները կբաշխվեն համայնքների, լիազոր մարմինների և իրավախախտումը հայտնաբերած պետական ծառայողների միջև:

գ) Կդադարեցվի Նոր փոքր հեկերի կառուցման լիցենզիաների տրամադրումը:

դ) Նոր ուսումնասիրության կենթարկվի այն հանքերի շահագործման կամ հետախուզման որոշումները, որոնց շուրջ հանրային և փորձագիտական բացասական կարծիք է

ձևավորվել:

ե) Օրենսդրորեն և գործնականում կիսատացվեն պոչամբարների շահագործման և ռեկուլտիվացիայի պահանջները:

զ) «Սևան» ազգային պարկում ստեղծված վիճակը կհամապատասխանեցվի «Սևանի մասին» ՀՀ օրենքի պահանջներին, և Սևանա լիճը կդարձվի քաղաքակիրթ հանգստի գոտի:

### **Բացառել Հայաստանում քաղբանտարկյալների առկայությունը և քաղաքական հետապնդումները:**

ա) Կստեղծվի «Ճշմարտության հանձնաժողով», որ կքննի Երրորդ հանրապետության քաղաքական հնչեղություն ունեցող բոլոր աղմկոտ գործերը (Հոկտեմբերի 27, Մարտի 1, ՊՊԾ գնդի գրավում, քաղաքական սպանություններ), այդ գործերով կայացված դատավճիռները և քրեադատավարական այլ որոշումները և խորհրդարանին կներկայացնի առաջարկներ, որոնց կայացման նպատակը կլինի հանրային համերաշխության հաստատումը:

բ) Նախկինում բարձր պաշտոն զբաղեցրած կամ քաղաքական գործունեություն ծավալած անձանց որևէ գործով որպես մեղադրյալ ներգրավելիս կբացառվի նրանց նկատմամբ կալանքը որպես խափանման միջոց կիրառելու պրակտիկան և կկիրառվի գրավ, բացառությամբ այն դեպքերի, երբ անձի ազատության մեջ մնալը ակնհայտորեն սպառնում է այլ անձանց կյանքին և առողջությանը:

### **ԵԼՔ դաշինքը կիրականացնի նաև հետևյալ քայլերը.**

- Պետական բյուջեի եկամուտների մեծացման արդյունքում առնվազն 20 տոկոսով կավելացվեն բյուջետային հիմնարկների աշխատավարձերը և կենսաթոշակները:

- Կդադարեցվի ավելացված արժեքի հարկը սահմանին գանձելու պրակտիկան, և ԱԱՀ-ն կգանձվի ապրանքի իրացումից հետո:

- Կօպտիմալացնի պետական կառավարման համակարգը և պետական հատվածի աշխատավարձերը կհասցվեն

մասնավոր հատվածի աշխատավարձերին:

- Կսահմանի եկամտահարկի միասնական՝ 20 տոկոս դրույ-  
քաչափ:

- Կվերացվեն արհեստական մենաշնորհները:

- Կիրականացնի գույքի կադաստրային իրական արժեքի  
հաշվառում, որի արդյունքում գույքահարկի մասով տեղական  
ուղղակի հարկումը կավելանա:

- Երևանը բեռնաթափելու և տարածքային համաչափ  
զարգացում ապահովելու նպատակով կսահմանի գոտիական  
հարկերի այնպիսի համակարգ, որ բիզնեսի համար գրավիչ  
կլինի գործունեություն ծավալել մարզերում:

- Կչեղարկի կուտակային կենսաթոշակային համակարգի  
պարտադիր բաղադրիչը և կձեռնարկի կամավորության  
հենքի վրա կուտակային կենսաթոշակային համակարգի  
կառուցումը:

- Կստեղծի հատուկ մարմին, որը կզբաղվի մանկատներից  
դուրս եկող երեխաների հետագա կյանքի կազմակերպման,  
նրանց սոցիալ-հոգեբանական աջակցություն ցուցաբերելու  
հարցերով:

- Կստեղծվի հաշմանդամություն ունեցող անձանց  
իրավունքների հարցերով գործակալություն, որը  
կապահովի հաշմանդամություն ունեցող անձանց  
իրավունքների պաշտպանությունը և օրենսդրության  
պահանջների խախտման դեպքում կկիրառի վարչական  
պատասխանատվության միջոցներ:

- Կձեռնարկի սահմանադրական փոփոխություններ,  
որի շուրջ հնարավոր կլինի հաստատել հանրային  
համերաշխություն, և որը կապահովի ՀՀ իրավակարգի  
լեգիտիմությունը:

**ԵԼԹ դաշինքը նախանշել և հետամուտ է լինելու իրավունքի  
գերակայության հետևյալ հինգ սկզբունքների իրագործմանը՝**

**ա) պետական իշխանության մաքսիմալ թափանցիկություն  
ու հաշվետվողականություն, իշխանության ճյուղերի զսպում-**

ների և հակակշռման գործուն, արդյունավետ մեխանիզմների ներդրում ու կիրարկում,

բ) օրենսդրության արդարություն, հստակություն, կայունություն և հավասար կիրառելիություն,

դ) արդարադատության անկախություն, անկողմնակալություն և անխուսափելիություն,

ե) արդարադատության ժամանակին իրականացում՝ բավարար քանակությամբ պրոֆեսիոնալ, բարոյապես կայուն, անկախ ու անկողմնակալ անձանց կողմից,

զ) իրավական կանխատեսելիության ապահովում և օրինակելի սովորույթների ու մշակույթի ամրապնդում:

### **Դաշինքը կարևորում է նաև հետևյալ քայլերը.**

ա) ավելորդ վարչարարության դեմ շարունակական պայքար և վարչական գործառույթների և անձնակազմերի օպտիմալացման ժամանակակից մեխանիզմների ներդրում,

բ) հանրակրթական և բարձրագույն ուսումնական հաստատություններում պետական հակակոռուպցիոն կրթական ծրագրերի ներդրում,

գ) կոռուպցիոն դեպքերի մասին հաղորդում տվող անձանց ֆիզիկական և բարոյական պաշտպանության ինստիտուտի ներդրում,

դ) շահերի բախման կարգավորման և վերահսկողության միասնական և խստացված օրենսդրության ընդունում և համապարտադիր գործադրում,

ե) հարկային օրենսդրության պարզեցում, հարկային գործակալների հետ անմիջական շփման բացառման նպատակով խստացված մեխանիզմների ներդրում, գործառույթների ավտոմատացում, գործուղման ծախսերի չափորոշիչների ներդրում, հուշանվերների գնման չափորոշիչների կարգավորում,

զ) հանրային ծառայության ոլորտում արդյունավետության բարձրացմանը զուգընթաց աշխատավարձերի բարձրացում,

է) պետական գնումների թափանցիկության բարձրացում,

մեկ անձից գնումներ կատարելու օրենսդրական հիմքերի սահմանափակում:

**ԵԼՔ դաշինքի սույն ծրագիրը սպառիչ չէ. Դաշինքը իր համար ծրագրային է համարում Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայով, ԶԶ Սահմանադրության ոչ փոփոխելի հոդվածներով հռչակված դրույթները՝ դրանցից բխող արժեքները և նպատակները:**

**ԵԼՔ դաշինքը իր ունեցած ողջ ազդեցությունը կօգտագործի սույն ծրագրի հանրայնացման և իրագործման համար:**

**ԵԼՔ դաշինքի համամասնական ցուցակը գլխավորում են՝**

- 1. Էդմոն Զրաչիկի Մարուքյան, «Լուսավոր Զայաստան»** կուսակցության խորհրդի նախագահ, ԱԺ պատգամավոր
- 2. Արամ Չավենի Սարգսյան, «Յանրապետություն»** կուսակցության քաղխորհրդի նախագահ
- 3. Նիկոլ Վովայի Փաշինյան, «Զաղաքացիական պայմանագիր»** կուսակցության Վարչության անդամ, ԱԺ պատգամավոր